

ՊԱՀԾՈՆԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՔ
ԱԶԳԱՅԻՆ ՊԱՏՐԻԱՐՔԱՐԱՆԻ


ԱՏԵՆԱԳՐՈՒԹԻՒՆՔ
ԱԶԳԱՅԻՆ ՖՈԴՈՎՈՅ

ՎԵՐԱԲԵՐՈՒՄ 1908-9 ՆԱՏԱՋՐՁԱՆԻ

ԵՐԵՍՓՈԽԱՆԱԿԱՆ ՎԵՐԱԿԱԶՄՈՒԹԵՆԵՆ ԵՏՔԸ.

ԴԻԱՏ Դ. Բ.

5 Օունիս 1909



Կ. ՊՈԼԻՍ

ՏՊԱԳՐ. Յ. Ա.Ս.ՏՈՒՐԵՎԸՆ Խ. ՈՐԴԻՔ

1909

ԱԶԳԱՅԻՆ ԸՆԴՀ. ՔՈՂՈՎ

ԲԱՑՈՒՄ 1908—9 ՆՍՏԱՇՐՋԱՆԻ

U T U S T E.

ՈՒՐԲԱՅ. 5 ՅՈՒՆԻՍ 1909

(Ե ՄԱՅՐ ԵԿԵՂԵՑԻ)

ԴԱԼԻ ԳՈՐԾ ՊԵՂԱՊԱՀ Տ. ՅՈՎՀ. ԵՊԻՄԿ. ԱՐՃԱՐՈՒՆԻ

ԱՏԵՆԱԿՊԵՏ. — ՏՕՐԹ. ՎԱՀՐԱՄ ԷԳԵՆՏԻ ԹՈՐԴՈՄԵԱՆ

ՕՐԱԿԱՐԳ

- Սահմանադրական Ուխս՝ նորընթիր Ս. Պատրիարքին :
 - Տեղեկագիր Երուսաղեմի հաշուոց Քննիչ Խորհրդարանական Յանձնաժողովոյ :
 - Տեղեկագիր Ա. Տեհապետաց Դիւանին՝ Թրքանայոց բաղձանեցները Ս. Հայրապետին ներկայացնող գրի մասին :
 - Տեղեկագիր նոյն Դիւանին՝ Օսմ. Խորհրդարանին մատուցանելի Յիշատակագրի մասին :
 - Ընտրութիւն՝ Կրօն. Ժողովոյ Երկու անդամոց :
 - Ընտրութիւն Երեք անդամոց՝ նախորդ Պատրիարքին դէմ Եղած ամբատանութեանց Քննիչ Յանձնաժողովոյ :
 - Ազգային Կեդրոնական Վարժարանի խնդիր :

ԵՐԱԾՈՒՄ ԺՈՂՈՎՐՅ

Պատր. Տեղապահ Սրբազնին աղօթքով
բացուեցաւ ատեանը ժամը 7ին, ի ներկայու-
թեան 60 երեսփոխանաց, որոնց թիւն ի վեր-
ջու լանգեցաւ 68ի:

1

Ա.ՀՄԱՆԱԴՐԱԿՑՈՒԹԵԱՆ ՈՒԽՏ
ՀՈՐԾՎԱՏԻՐ Ա. ՊԱՏՐԻԱՐքԻՆ

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՅ. — Տես' լք Երեսիո-
խանք, ինչպէս գիտէք՝ մայիս 23ի հանդի-
սաւոր նիստին մէջ Ազգային Ժողովը կ. Պու-

սոյ Պատրիարք ընտրեց Զմիւռնիոյ Առաջնորդ
Բարձրաշնորհ Դուրեան Սրբազնը և անմիտ
ջապէս ստորագրեցինք ընտրական մալպա-
թան որ մատուցուեցաւ թ. Դրան։ Պատրի-
արքական ընարութիւնը վաւերացնող պե-
տական պաշտօնագիրը հասաւ մայիս 26ին։
Ահաւասիկ անոր պատճենը։ —

Առլիյէ վէ Մէղահիպ նէզարէթը ձէլիլէս
սինտէն էրմէնի Բաթրիդ Գայմագամէլըլընա
խիթապէն եազըլան 26 մայրս 1325 Թարիկուի
վէ 37 նօմէրօլու թէզքէրէի ալիյէնին այնէն
ուսութիթի տիր :

Միւնհալլ օլան Խսթանպօլ վէ թէվապիկ
էրմէնի Բաթրիգլիկինէ՝ Խզմիր մէրիսասաս

ՄԱՅՐ ԴԻՒԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎՈՅ

<i>Մինաս</i>	<i>կգ.</i>	<i>Զերազ</i>	<i>Ա. Ասենապետ</i>	<i>Հրանտ</i>	<i>կգ.</i>	<i>Ասասուր</i>	<i>Ա. Ասենադպիհր</i>
<i>Sofr.</i>	<i>Վահրամ</i>	<i>»</i>	<i>Թորգումեան</i>	<i>Բ.</i>	<i>»</i>	<i>Հայկ</i>	<i>»</i>
<i>Դեմրա</i>	<i>»</i>	<i>Ալշանեան</i>	<i>Գ.</i>	<i>»</i>	<i>Յովհանես</i>	<i>Բ.</i>	<i>»</i>

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԴԻՀԱՆՔ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎՈՅ

ՁԱՌԱՋԱՍՊՈՒԹԵԱՆ ԴԻԻԱՆ		ՅԱՐԱԲԵՐՈՒԹԵԱՆ ԴԻԻԱՆ	
S. Հմայեակ Եպիսկ. Դիմաբուեան (Ասենապէտ)		Վահան կժ. Էսաեան (Ասենապէտ)	
Լեւոն կժ. Սաարձեան		Sofr. Կարապէտ » Մուրագիշ. (Ասենադպիր)	
Նշան » Ճիշտանեան		Յովհաննես » Խազուղեան	
ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹԵԱՆ ԴԻԻԱՆ		ԻՐԱԿԱՍՈՒԹԵԱՆ ԴԻԻԱՆ	
Յովհաննես կժ. Հիմնդեան (Ասենապէտ)		S. Մաղաքիա Եպիսկ. Տերութեան (Ասենապէտ)	
Ռուբեն » Զարդարեան (Ասենադպիր)		Ռուբեն կժ. Փափազեան	
Յովլուկի » Գույումնեան		Ասեփան » Կուրտիկեան	
ԿԱԼՈՒԱԾՈՑ ԴԻԻԱՆ		ՆԱԽԱԶԵՌՆՈՒԹԵԱՆ ԴԻԻԱՆ	
Վուամշապուհ կժ. Մանուկեան (Ասենապէտ)		Հմայեակ կժ. Մրամեաց (Ասենապէտ)	
Արիստակի » Գասպարեան (Ասենադպիր)		Խնդիր » Սիմոնեան (Ասենադպիր)	
Արամ » Հաղանեան		Յակոբ » Պահրի	
ՀԱՄԱՐԱԿԱԼՈՒԹԵԱՆ ԴԻԻԱՆ		ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ ԴԻԻԱՆ	
Օննիկ կժ. Տերութեան (Ասենապէտ)		Բիրզանդ կժ. Քեշեան (Ասենապէտ)	
Բիգանդ » Պօղանեան		Հայկ » Խօնասարեան	
» Հայկեան		Մելիքն » Կիւրնեան	

Կ Ե Ր Տ Տ Ե Ց Յ Ա Վ Ա Խ Ո Ւ Մ Բ

Արիստակու	կֆ.	Գանպարեան (Ամենապետ)
Ղազարու	»	Զպլազեան (Ամենադպիր)
Պարզեւ	»	Փափազեան (Գանձապետ)
Օննիկ	»	Տերութեան (Մատակարար)

356

Դուրեան Եղիշէ էքչնտի Հազրէթլէրինին
վուգուի ինթիսապընա, վէ ոլ պապտէքի
մազպաթաի ինթիսապիյնին կէօնտէրիլտի-
կինէ տակը պիլ վիւրուտ, մէլգութը իլէ պէ-
րապէր Պապը Ա'լյոէ թագտիմ իտիլէն թագ-
րիրի տօսթանէլէրի իւզէրինէ, միւշարունի-
լէյին մէզքիւր Բաթրիգլիկէ թայեինի խու-
սուսընա Մէճլիսի Մախսուսը Յիւքէլա դա-
րարը իլէ պիլ իսթիզան՝ Իրատէի Սէնիյէի
Հազրէթը Փատիշահի շէրէֆմիւթէալլիդ պույ-
րուլաըղը պա թէզքէրէի Սամիյէ թէպլիդ ի-
տիլմիշ, վէ քէիֆիյէթ Բաթրիգի միւշարու-
նիլէյիտէ պիլտիրիմիշ օղմաղլէ, պէեանը
հալ սիեագընտա թէզքէրէի սէնավէրի թէր-
դիմ գըլընտը:

(Սոյն. թէզքէրէին ընթերցումէն ետք՝ Ատենապետ էֆ. Փողովին կը հալորդէ նաեւ Ս. Պատրիարքին չորհակալութեան հետեւեալ հեռագիրը) :

Առ. Ատենապետն
Հայոց Բնդէ. Ժողովին
կ. Պոլիս
ԻՐ, 24 Մայիս

Իմ կարողութենէս և արժանիքէս բարձր
եղող Կ. Պոլսոյ Պատրիարքութեան ընտ-
րութիւս ծանուցանելով՝ յանուն Ընդհանուր
Ժողովոյ Զեր շնորհաւորութեանը համար ՀԵ-
ՆՈՐԻԿԱԿԱԼՈՒԹԻՒՆՍ կը յայտնեմ և յաջողու-
թեանը համար Աստուծոյ կ'ապաւինիմ:

Առաջնորդ Զմիւռնիոյ
Եղիշե Եղիսկ, Դութեալ,

Ա.ՏԵՆՍ.ՊԵՏ. էֆ. — Որովհետեւ նորըն
տիր Ս. Պատրիարքը Զմիւռնիա կը գտնուէր,
Ազգ. ժողովս պատգամաւորութիւն մը կազ-
մաց՝ Տ. Մաղաքիա եպիսկ. Տէրունեանէ, Տ.
Դնէլ Ծ. վրդ. Գալէմքեարեանէ, Ստեփան
էֆ. Դարաեանէ և ինձմէ՝ երթալ հրաւիրե-
լու և առաջնորդելու համար Ն. Ա.մենա-
պատուութիւնն իր Ա.թոռը: Պատգամաւորու-
թիւնը Զմիւռնիոյ մէջ արտասովլոր ընդունե-
լութեան առարկայ եղաւ, ի պատիւ Ա.զգին
Ն.երկայացուցիչներուն սարքու եւած. ու ու

բեսփոխանի ներկայութեան պահանջ չիկայ։
Ա. ԱՐՍԵՆԵԱՆ էֆ. — Կատարուելիք
ուխտը քուէարկութեան մը յանգելու հան-
գամանքը չունի, որպէս զի օրինական մե-
ծամանութիւն գնառել հարկ ըլլայ։

Պուղկիէ, Սերովբէ էֆ. Դաւիթեանէ և Մորուքեան էֆ. է, որոնք մեղի հետ ուղղեցիցեցան Ս. Պատրիարքին ի Կ. Պոլիս : Նորընտիր Ամենապատիւ Սրբազն Պատրիարքը այժմ գտնուելով յԱղդ. Պատրիարքաբան, կ'առաջարկեմ որ Աղդ. Ժողովը հրաւիրակ մարմին մը նշանակէ իր մէջէն, երթալ, Ս. Պատրիարքը Մայր Եկեղեցի առաջնորդելու համար, ուր՝ Նորին Ամենապատութիւնն ըստ ոռվորութեան՝ պիտի կատարէ իր Սահմանադրական Ուխտը : Այդ պաշտօնին համար Դիւնս կ'առաջարկէ՝ Տ. Մաղաքիա եպիսկ. Տէրունեան, Տ. Դեւոնդ Ծ. վրդ. Դուրեեան, Տ. Արսէն Ծ. վրդ. Վեհունի, Տ. Տաճառ, Տ. Արիստակէս, Տ. Միքայէլ քահանաները, Տօքթ. Աձէմեան պէյ, Համբարձում Պօյածեան, Արտաշէս Ֆնտգլեան և Յարութիւն

Վ. ՄԱՆՈՒԿԵԱՆ էֆ. — Հրաւերակներու ընտրութենէն աւելի կարեւոր խնդրով մը վրայ կուզեմ խօսիլ : Տակաւէին 71 երես-փոխաններ ներկայ չեն և մինչեւ որ չի լրա-նայ այդ օրինական թիւը չի կրնար կատար-ուիլ Ուստի արարողութիւնը, որ Սահմա-նադրութեան վրայ կնքուելիք դաշինք մըն-է (acte), հետեւաբար, մեծամասնութեան ներկայութիւնը անհրաժեշտ է :

Ա. ԳԱՅՊԱՐԵԱՆ Էֆ. — Տրուելիքը ո՞ոչում մը չէ, այլ արարողութիւն մը ո՞ի լինայ կատարուիլ ի ներկայութեան որ եւ է թիւի անդամոց։

Պ. ՓԱՓԱԶԵԱՆ կՅ. — ՃԻՇՎ նոյն
անը պիտի բաէի:

Խ. ՍԻՄՈՆԵԱՆ էֆ. — Սահմանադրութեան մէջ յատուկ տրամադրութիւն մը իւայ այս մասին, այլ ըստւած է թէ նորընախրատրիարիարքը իր ուխտը կը կատարէ ի ներայութեան երեսփոխանաց և ժողովրդեան:

Ա.ՏԵՇԱ.ՊԵՏ էֆ. — Կը զարմանամ յա-
ռցուած խնդրին համար։ Հոգելոյս Ներսէս
բազան Պատրիարքն իր ուխտը 68 երես-
ուխտներու ներկայութեանը կատարած է՝
մեր օրինքին մէջ այս մասին բնաւ 71 ե-
ռափոխանի ներկայութեան պահանջ չիկայ։

Ա. ԱՐՄԵՆԻԱՆ էֆ. — Կատարուելիք
խոր քուէարկութեան մը յանդելու հան-
սմանքը չունի, որպէս զի օրինական մե-
սմասնութիւն փնտուել հարկ ըլլայ:

ԶԱՅՆԵՐ. — Այս՝, այս՝, ուխտը կըմ-
նայ կատարուիլ:

(Ժողովին որոշմամբ, Ատենապետ էֆ.
կը հրաւիրէ հրաւիրակները՝ Պատրիարքարան
եթեալ և Ս. Պատրիարքը առաջնորդել ի
Մայր Եկեղեցի) :

Քառորդ ժամ մը վերջ, Ամեն. Տ. Եղիշէ
Ա. Պատրիարք՝ առաջնորդութեամբ հրաւի-
րակ մարմին անդամներուն և հետեւողու-
թեամբ իզմիրի պատգամաւորութեան, մաս
Մայր Եկեղեցի: Երգեցիկ դպիրներ ու քահա-
նաներ կը բերէին Ն. Ամենապատուութիւնը,
զոր յոտնկայս և ծափահարութեամբ ընդու-
նեցին բոլոր երեսփոխանները, ինչպէս նաև
ժողովրդեան հօծ բազմութիւնն մը, որ վա-
ղուց լեցուցած էր տաճարը: Նորին Ամենա-
պատուութիւնը գնաց կանգնիլ նախագահա-
կան Աթոռին առջեւ:

Ա.ՏԵՇԱՊԵՏ էֆ. — Սրբազն Հայր,
յանուն Աղքային Երեսփ. Ժողովոյ՝ ջերմ շը-
նորհաւորութիւններ կը յայտնեմ Զեր Բարձր
Սրբազնութեան որ արժանաւորապէս կը
բարձրանաք այսօր յաթոռ Պատրիարքութեան
Հայոց Թուրքիոյ: Կը մաղթեմ որ Դուք կա-
րող ըլլաք վարել այս ծանր պաշտօնը Օրի-
նաց սահմանին մէջ, և կը խնդրեմ որ Թոյլ
տաք ինձ ներկայացնել Զեր Բարձր Սրբազ-
նութեան՝ Աղք. Սահմանադրութիւնը, որ
պէսզի կատարէք Զեր օրինական Ուխտը:

(Ատենապետ էֆ. ի այս հրաւերին վրայ
Ս. Պատրիարք Հայոց, Աղք. Մահմանադ-
րութեան տետրօ առնելով, հոգեւոր դասին
առաջնորդութեամբ սեղան բարձրացաւ
Երեսփոխաններուն դառնալով, հետեւեա-
բանակառութիւնն արտասանեց) :

«Տեսականը»:

«Սիրաս լեցուն է չնորհապարտ զգացումներով՝ ո՞չ առանց երկիւղածախառն արփակումներու, ևրբ ապիկար ու անարժան՝ կհրատիրուիմ կ. Պօլսոյ Պատրիարքութեածանը ու դժուարին պաշտօնին, առաւելազանդ վարչակութեամբը Ազգիս:

«Պատրաստ եմ կատարելու ութաս՝
պիտի կապէ զիս անքակտելի հանգոյցով՝
Օսմ. Սահմանադրական կառավարութեա-
ու Ազգիս շահերուն եւտ միանգամայն, ա-
ռևստիս մէջ ալ դնելով իմ գիտակցութեա-

Ակայութիւնը իր բոլոր անկեղծութեանը ու
լրութեանը մէջ :

« Զեմ վարանիքը յայտարարելու թէ իմ
տկար ուժերուս ապաւինութեամբը չէ՝ որ ե-
կած եմ պատասխանատուութեան մը բեմին
առջեւ երեւնալու, ուր գուցէ անաշառ դա-
տաւորի մը արդար սաստը պիտի սարսեցնէ
զիս, եթէ երբեք չկարենամ «հատուցանել իմ
երդում»։ Սակայն և այնպէս, վատահացած
բոլորանուէր գործակցութեանը Պատկառելի
ժողովիդ և Ազգ. Վարչութեան, խրախուս-
ուած կուսակցութեանց միազօր համերաշխու-
թենէն, և մանաւանդ զօրացած Օսմ. Սահ-
մանադրական կառավարութեան արդար բար-
եցակամութեամբը, յանձն կ'առնեմ այ-
լուծը որուն ներքեւ չնկճուելու համար ձեր
աղօթքներուն և Աստուծոյ կ'ապաւինիմ։ Իս-
պարտք ուրեմն, խառնելով ձերինին հետ-
է՛ ծառայել Օսմ. Սահմանադրական կառա-
վարութեան և սիրելի մեր Ազգին, պահպա-
նելու համար այն ժողովարդը որ իր ամբող
պատմական շրջաններուն մէջ ապերցաւ ա'յն
պէս որ ո՛չ մէկ ժողովուրդի նախատինքի
արժանի գործ կատարեց երբէք։ Նոյն իո-
3000 տարիներ առաջ Բաբելոնէն բերուա-
իր հանդարտ գործունէութիւնը, յառաջդի-
մասէր ոգին ու հողին հետ կապուած մնալու
մշակութեան սէրը կազմեցին իր կեանքը, ո-
վերջին վեց դարերու մէջ ալ Օսմ. Կառա-
վարութեան գնահատումին արժանացաւ
Նոյն այդ ժողովուրդն իր ինքնութիւնը պա-
պանելու բոլոր ուժովը ոգեւորուած, պիտի
կրնայ ունենալ խաղաղութեան նոյն երջանկ
օրերը։ Բայց որովհետեւ այս ընդարձակ կ-
ռավարութեան մէջ Օսմ. պետութիւնը կա-
մոզ զանազան տարրեր կան, որոնք իրար
մօտ և իրարու մէջ պիտի ապին, նո՞ր, ա-
դարութեան և հաւասարութեան վրայ հի-
նուած զօրութիւն մը պիտի կրնայ զանո-
միացնել ծամարիտ նպատակակէտի մը շու-
որ երկրին յառաջդիմութիւնն ու երջանկ
թիւնը պիտի ըլլայ։ Այդ նոր զօրութի-
պիտի կազմուի նոյն իսկ երկրին մէջ, ո-
մադիր ոյժ մը ստեղծելու համար բոլոր վ-
ճութիւններուն դէմ։ Ու այդ տարրե-
զուգակցութեան մէջ ամենէն հաւատարի-
ամենէն արդար դերը պիտի կատարէ դա-
եալ Հայոց ժողովուրդը։

« Դուք ինքնին գիտէք թէ դարս
պահպանութեամբ նուիրականացած այդ

զովուրդը ի՞նչ կենսական միջոցներով ապրեցաւ : Ես մի առ մի պիտի չի թուեմ զանոնք . միայն պիտի ուզեմ յիշեցնել գէթ թէ այն սուրբ ու անխախտ հաստատութիւնը որ Եկեղեցի կը կոչուի, պահեց մեր հաւատալիքները, մեր աւանդութիւնները, մեր պատմութիւնն ու մեր կեանքը, իր շուրջը կանգնելով ու բարձր պահելով մանաւանդ այն յարկերը ուր Ազգին մանկան կրթուեցաւ, ու այօպէս շինեց իր ճակատագիրն ու բախտը, առանց զայն մատնելու կորստեան վատանդին :

«Այդ ժողովութեղն է որ կուգայ այսօր
Օսմ. պետութեան բարօրութեան համար ի՞ր
կողմէն իր բաժինը բերելու։ Պիտի ներէք,
եթէ պահ մը ձեր առջեւ թափ տալ ուզեմ
երեւակայութեանս, և այդ Օսմ. պետու-
թիւնը ներկայացնեմ իբրեւ կենդանի պատ-
կերը պատերազմի պատրաստուող մարտիկի
մը՝ որ իր յաղթութեան վրայ աներկեւան
կը ցնծայ։ Բոլոր իր մէջ ապրոզ Օսմ. տար-
բերը իրարու հետ կը մըցին՝ սպառազինելու
համար զինքը։ Խւրազանչիւրը պիտի բերէ իր
զէնն ու զարդը։ Խսկ ես պիտի ուզէի ընտ-
րել գօտին, այդ հզօր մէջքի գօտին՝ որ ընդ-
գրկումի և փարումի խորհրդանշանն է, գօ-
տին՝ որ պինդ պիտի բռնէ արիութեան մար-
մինը, և ուրկէ կախուած պէտք է մնայ միշտ
արդարութեան սուրին երախակալը։ Այդ
նուրիրական բաժինը ես իմ ձեռքովս, ձեր
գործակցութեամբն ու բոլոր ժողովուրդին
հաճութեամբը պիտի ընծայեմ Օսմ. Պետու-
թեան։

«Անո՞ր և Ազգիս հաւատարիմ մնալու
համար կը դառնամ Աստուծոյս, և կ'ուխտեմ
ձեր ներկայութեանը: — Ո՞վ իմ Աստուծս,
զոր իմ հայրերս պաշտեցին. պաշտեցին զքեզ
իրենց բոլոր նահատակութիւններովը՝ տառա-
պանքի երկայն դարերուն մէջ, ու ամէն օր
սակայն դարձան Քեզի, Քու ողորմութենէ դ
ակնկալելու համար իրենց փրկութիւնը: Քու
մեծութեամբդ բռնապետները կ'իյնային, ինչ-
պէս կը կարդայինք պատմութեան մէջ. և
քու զօրութեամբդ՝ դարձեալ՝ մեր աչքին
առջեւը տեսն ո՞նք է».

«Հիմա որ ազատ կը զգանք ինքինք-նիս, հիմա որ Սահմանադրական կառավա-րութեան ներքեւ կ'ապրինք, չնորհակալ կ'ըլ-լանք Քեզի։ Պահէ՛ այս ժողովուրդը՝ որ զՔեզ սիրեց ու պիտի սիրէ յաւթեան»։

(Այս բանախօսութենէն ետք, որ ջերմագին ճափահարութիւններով ողջունուեցաւ, Ա. Պատրիարք Հայրը դառնալով դէպի Խորան, որ շքեղապէս լուսազարդուած էր, հանեց վեղարը զլիսէն և սեղանը համբուրելէ ետք, ծունկ չոքեց ու Աղդ. Սահմանադրութեան Կրդ յօդուածէն արտասանեց Պատրիարքական Ուխը):

ଓର୍ବିସ

« ԱՐԵՋԻ ՍԱՏՈՒՆՈՅ ԵՒ Ի ՀԵԲԿԱՅՈՒԹԵԱՆ
« Ա.ԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎՈՅ ՀՐԱՊԱՐԱԿԱՒ ԿՈՒԽՏԵՄ
« ՀԱԼԱՏԱՐԻՄ ՄՆԱԼ, ՕՍՄԱՆԵԱՆ ՍԱՀՄԱՆՈՒԹՅԱ-
« ԿՈՆ ԿԱՐՈՎԱՐՈՒԹԵԱՆ ԵՒ Ա.ԶԳԱՅԻ, ԵՒ ՃՇՄԱՐ-
« ՏԱՊԵՍ ՀՄԿԵԼ, Ա.ԶԳԱՅԻՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹԵԱՆ
« Ա.ԹԵՐԵՒ ԳՈՐԾԱԴՐՈՒԹԵԱՆ»:

ՏԵՂԱՊԱՀ ՍՐԲԱԾԱՆ. -- Սրբազն եղ-
բա՛յր ի Քրիստոս, պաշտօնս կ'աւարտի այս
պահուս, և ըստ ընկալեալ նախանթաց սովոր-
ութեանց՝ կուգամ կատարել այն պարտա-
կանութիւնը որ ըստ օրինի ինձ վիճակեցաւ:
Կը մատուցանեմ Ձեզ, Սրբազն եղբայր,
ոսկեճամբուկ գաւաղանը որ թէեւ կը փայլի՝
բայց փշոտ է: Ձեր ընթանալիք ճանապարհը
առապար և ասպառաժուտ է, սակայն ձեր Ա-
մենապատութիւնը շրջապատող Աղջին
ներկայացուցիչ ժողովներուն աջակցութեամբ՝
զայն պիտի կրնաք վերածել հարթ ճանա-
պարհի և Ձեր հմտութիւնը պիտի նպաստէ
ուն բանեցու ան ոռոջեռո ոռոն ո նկասութ-

թիւն և յուսահատութիւն կը պատճառեն։
իրբեւ քաջալանջ հովիւ և իրբեւ արի ըմբի։
Զեր Սրբազնութիւնը պիտի գիտնայ թումբ
դնել ամէն դժուարութեան դէմ, և ես կը
մաղթեմ որ կարող ըլլաք ի գլուխ հանել այս
դժուարին պաշտօնը։ Ահաւասիկ, Սրբազն
եղբայր, ձեզ կը մատուցանեմ Զեր Պատրի-
արքական գաւազանը և իմ տեղապահական
պաշտօնս լրացած համարելով՝ կը մեկնիմ։

ԱՏԵՆԱՊԵՏ էթ. — Մեր ալ պարտա-
կանութիւնն է, Տեարք Երեսիոփանք, մաղ-
թել որ նորընտիր Սրբազան Պատրիարքը քաջ
հովիւ հանդիսանայ Ազգին այս դժուարին
ժամանակներուն մէջ, և միանգամայն կ'ա-
ռաջարկեմ յոտնկայս չնորհակալութեան քուէ
տալ Տեղապահ Սրբազան հօր, իր կարճատեւ-
ռալց բարւոք պաշտօնափարութեանը համար :

(Երեսփոխան Տեարք յոտնկայս և ծա-
փահարութեամբ չնորհակալութիւն յայտնեցին
Տ. Յովհաննէս եպիսկոպոսի, որ մեկ-
նեցաւ քիչ յետոյ) :

(Ս. Պատրիարքը, հոգեւորական դասէն
Արշապատեալ, իջնելով եկեղեցւոյ բեմէն,
բազմեցաւ Նախագահական աթոռը և Երես-
փոխան Տեարք կարդաւ գացին համբուրել
Ն. Արքազնութեան աջը և իրենց շնորհաւո-
րութիւնները մատուցանել։ Եւ յետոյ շա-
րունակուեղաւ նիստը) :

ԱՏԵՆԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹԻՒՆՔ

ԲԱՅԱԿԱՑՈՒԹԻՒՆԵՐ

Ս.ՏԵՆԱՊԵՏ էֆ. — Կը յայտարարեմ թէ
ներկայ երեսփոխաններու թիւն է 67, որ
Քիչ յետոյ թերեւս յանգի 71ի: Կ'անցնինք
առենական գործողութեանց: Երեք օրինաւոր
բացակայութիւն ունինք արձանագրիկիք. Գե-
ղամ էֆ. Տէր-Կարապետեան, Երուանդ էֆ.
Քարաեան և Թորգոմ էֆ. Պոյածեան. Վեր-
ջին երկուքը ճամբորդութեան պատճառաւ
յամանակ մը չպիտի կրնան ներկայ գտնուիլ
Փաղովիս նիստերուն: Մեր սեղանին վրայ
ունինք Խառն ժողովոյ մէկ պաշտօնագիրը՝
Երուսաղէմի Պատրիարքութեան նկատմամբ,
որ նախորդ նիստէն յանձնուած էր Մայր Դի-
ւանին, բայց Պատրիարքական ընտրութեան
և Վեհ. Հայրապետին ընդունելու թեան պատ-
ճառաւ չի կրցաւ կարդացուիլ և յետաձգուե-
նաւ այսօրուան նիստին:

ՊԱՇՏՈՆԱԳԻՐ Ա.Զ.Գ. Վ.Ա.ՐՉՈՒԹԵԱՆ
ԿՐՈՒՅԱ, ԵՐԵՎԱՆԴՐԱԿԱՆ ՊԱՍՏԻԱՐՔՈՒԹԵԱՆ

(Ատենադպիր Հրանտ էֆ. Ասատուր Կը կարդա, միևնու առաջնադպիրը):

Վահամաշուք Ատենապետ է Քէնտի
Աղքային Երեսոփանական Ընդհ. Ժողովոյ
Սնցեալ տարի, երբ Երուսաղէմայ Միա-
բանութեան մեծամանութիւնը մէկ կողմ
անցած, իսկ Պատրիարք Տ. Յարութիւն Ս.
Արքեպիսկոպոսը միւս կողմ մնացած՝ զիրար
բջքական առաջնան գտառւած, զիրար կ'ամ-
բաստանէին. և Արք, Կիդր, Վարչութեան,

Ազգ . Երեսփ . Ընդհ . Ժողովոյ պաշտպանութիւնն ու միջամտութիւնը կը խնդրէին , Երբ միաբանութեան յանդգնութիւնը այն աստիճանի էր հասած որ անոր սպառնալիքներէն Պատրիարքը սարսափած և իւր կեանքի ապահովութիւնը յայտնապէս շեշտելով՝ հրաժարական ներկայացուցած էր , Ազգ . Երեսփ . Ընդհ . Ժողովը Երուսաղէմայ վաղեմի և չարաբաստիկ խնդիրը ձեռք առնելով և Պարիարքի հրաժարման խնդիրը յետաձգելով ,

Աղդ, Երեսփ, Ընդհ, Ժողովը նախ որուց կաշուական ինդրոյն քննութիւնը և զեղծմանց ու զեղծարարներու քանակի ու որակի ստուգումը յանձնել իւր կողմէ կազմուած յատուկ Քննիչ Յանձնախումբի մը, և երկրորդ որոշումավ Աղդ, Կեդր, Վարչութեան իրաւունք տուաւ թէ՛ հաշուական և զեղծմանց տեղն ու տեղը քննութեան օժանդակելու և թէ՛ վանդքին ելմտական վիճակին տէր դառնալով անմիջական հսկողութեան ներքեւ :

Բայց, մինչ Ազգ. Երեսի. Ընդհանուր
Ժողովը և կեղր. Վարչութիւնը խնդիր
ի հիմանց և լրջօրէն ձեռք առնել որոշեցին
գժտեալ և սպառնալից կողմէրը այնպէս հաշ
տուածներու երեւոյթ ստացան որ իր թ
արտակարգ ու քննադատելի ոչինչ պատա
հած չըլլար. Տ. Յարութիւն Ս. Պատրիարք
սկսաւ հեռազբերով և գրութիւններով հա
մերաշխութեան և օրինապահութեան վկացու
թիւններ տալ այն խմբակին վերաբերմանը
որոնցմէ իր կեանքը վտանգի մէջ գտնուի
յայտնած ու հրաժարականը մատուցած է
սկսաւ Երուսաղէմ ի գործակցութիւն հրա
րել զանոնք զօրս իրրեւ մեղապարտ վտա
րած էր, և ապօտամբ ու միակ յանցապար
ներկայացնել զանոնք որոնց հետ համախ

կերեւաք յառաջ Ս. Պատրիարքի ս
Տ. Յարութիւն Ա. Պատրիարքի ս
տարօրինակ վարժունքը միաբանական սպա
նալեաց հետեւանք ըլլալը ուղղակի և անոռ
զակի կերպով կեղր. Վարչութեանս կը ս
ղորդուէր: Ազգ. կեղր. Վարչութիւնը
կարող նախ քան քննութիւն և Ազգ. Եր
փոխանական ընդհ. Ժողովոյ հեղինակա
դատաստանը այս կամ այն կողմ. Միու
նութեան այս կամ այն անդամը չքմեղ ն
տել: Բայց իրողութիւն մը կար որ ակնե
էր, այսինքն թէ Վանքը ու Միաբանութի

անիշխանութեան էին մատնուած և անարդել կը շարունակուէին զեղծումներն, աւարն ու թալանը, ուստի ամէն բանէ առաջ անհրաժեշտ կը դառնար դադրեցնել աւարը, տէր դառնալ Վանքի գոյքերուն և ձեռք առնել ելմտական մատակարարութիւնը։ Այս նպատակին հասնելու համար, Խառն Ժողովով որոշուեցաւ յատուկ մարմին մը ընտրել և Երուսաղէմ զրկել, որուն պարտականութեանց ու իրաւասութեանց սահմանն ևս գծուեցաւ յատուկ հրահանգով, և դիւրասակնալի նախազգուշութեամբ մը որոշուեաւ մինչեւ յիշեալ մարմնոյն Երուսաղէմ ժամանելն ու գոյքերուն տէր դառնալը՝ զաղանի զանել հրահանգը, մինչեւ իսկ չարտօնել նոյն արմինը՝ զայն բանալ և պարունակութեանը եղեկանալ։

Այս նախազգուշութեանց հակառակ, ի-
րականութիւնը ցոյց տուաւ որ այդ մարմնոյն
իր տեղը հասնելէն առաջ՝ միաբանութիւնը
տեղեկացած էր հրահանգին բոլվանդակութեանը
և այդ պատճառով ևս նախապատրաստուե-
ցան անոր պաշտօնը անյաջողութեան մատ-
նելու, օժանդակ ունենալով կառավարական
հայեցողութիւն որ յանկարծ երեւան եկաւ
Ազգային Պատրիարքարանի իրաւասութեան
նկատմամբ, ինչ որ կը զուգազիպէր Միաբա-
նութեան ձգտումներուն և թերառութեանը.

Այդ միջոցին էր որ կեղքը, կառավարութիւնը՝ տեղական կառավարութեան զեկուցմանց վրայ հիմնուելով կը յանձնարարէք Աղգային Պատրիարքարանին՝ օգնական մ'անուանել Երուսաղէմայ Պատրիարքին, անոր անկարողութեան մատնուած ըլլալուն պատճառաւ :

Աղջային կեղը . Վարչութիւնը որ պարտաւոր է և ուխտած՝ Աղջային Սահմանադրութեան արամադրութիւնները յարգել ու յարգել աալ , և հիմնուած՝ Սահմանադրութեան որոշ ու բացարձակ արամադրութեանց ու Աղջ . Երեսի . Բնդհ . Ժողովոյ որոշմանց , Աղջային վաղեմի իրաւասութեանց վրայ , փութաց պատասխանել ըստ օրինի , թէ՛ ոչ թէ օգնական կամ փօխանորդ , առ Տեղապահ միայն կարելի է ընտրել :

Ընտրուած պատասխանութիւնը ու կամազան պատասխանակարգը լին կարելի է կ'ենթարկէ իր աղջեցութեանը և թէ՛ Մարմինը կ'ենթարկէ անգործութեան : Մինչեւ իսկ այս վերջնոյն անդամները իրենց կեանքը վտանգուած տեսնելով՝ կը հարկադրուին թողու երուսաղէմը և հեռանալ :

Այնուհետեւ , Աղջային ընդհանուր գոյութեան սպառնացող յայտնի միջադէպեր և աղէտներ վրայ հասնելով , կեղը . Վարչութիւնը հնարաւորութիւն չունեցաւ զբաղելու այս առաջնակարգ կարեւոր խնդրով որ կը լին կամազանակարգը լին կարեւոր խնդրով :

Անարուած յատուկ մարմնոյն պարտա-
կանութեանց իրադործումը ջղել տալու
համար դիմում եղաւ Կեղրոնական կառա-
վարութեան և իշխցնելով Ազգ. Պատրիար-
քարանի Վարչութեան և Ընդհ. Ժողովոյ ի-
պառնայ Ս. Յակոբեանց միջահարթաստ վանքը
ամենաառղորմելի անշքութեան և դատարկու-
թեան վերածել, որովհետեւ ոչ միայն ըստ
կամա գանձումներ, փոխառութիւններ և ծախ-
քեր կը կատարուէին, ոչ միայն և անքին

սահմանները, խնդրուեցաւ
նձնաբարել տեղական կառավարութեան՝
կատար ածել և դիւրացնել մարմնոյն ընե-
ք պահանջներն ու առաջարկները:

Կեդրոնական Կառավարութիւնը իւր
ստասիսանագրով ջանացած էր հերքել Աղ-
յին իրաւասութիւնները և Վանքին միակ
ը ու իրաւասու ճանչնալ Երուսաղէմայ
արիարքը, որով և նոյն մարմնոյ պարտա-
նութեանց սահմանն ընդունելով միայն
եւ հաշտարար՝ պաշտօնական յանձնարա-
գրին ըստ այնմ բովանդակութիւն արուած

Միաբանութեան ազգադաւ դաւադրու-
անց համապատասխանող կառավարական
և հայեացքին օրինական հակասութիւնները
նապէս պարզող և ապացուցանող անհա-
տ պատասխանը իր ժամանակին արուե-
լ, բայց յուսալով որ Տ. Յարութիւն Ա.
արիարք պիտի չթոյլաւարէ մինչեւ այդ
ոինձան միաբանական ռանձգութիւններ և
ոի աջակցի մարմնոյն պարագանութեանց
գործմանը, կեդք. Վարչութեան Խառն
ըովը փութաց ճամբայ հանել արդէն ըն-
ւած և երեք անդամէ բաղկացած Մար-

Թէպէտ Մարմինը այնաեղ հրահանգը
ած, բովանդակութիւնը Տ. Յարութիւն
Պատրիարքին ևս կարդացած ու հաղոր-
էր, թէպէտ Ն. Սրբազնութիւնը յայտ-
վ իր համամտութիւնը և հաւանութիւնը,
ոչակցութիւնը խոստացած էր, բայց ա-

Հակառակ՝ միաբանութիւնը ամբաստան-
ու դերէն դատաւորի դերին անցնելով և
ազան սպառնալիքներով թէ՛ Պատրիարքը
թարկէ իր աղջեցութեանը և թէ՛ Մար-
կ'ենթարկէ անգործութեան։ Մինչեւ
այս վերջնոյն անդամները իրենց կեանքը
նգուած տեսնելով՝ կը հարկադրուի՞ն
ու երուասադէմը և հեռանալ։

Այսուհետեւ, Աղքային ընդհանուր գու-
հան սպառնացող յայտնի միջադէպեր և
ոներ վրայ հասնելով, կեզր. Վարչու-
թը հնարաւորութիւն չունեցաւ զբաղելու-
առաջնակարգ կարեւոր խնդրով որ կը-
նայ Ս. Յակոբեանց մեծահարուստ վանքը
առղորմելի անշքութեան և դատարկու-
թը վերածել, որպիհետեւ ո՞չ միայն ըստ
դանձումներ, փոխառութիւններ՝ և ծախ-
կը կատարուէին, ո՞չ միայն վանքին

ԲԱՑՈՒՄ 1908-9 ՆԱՏԱՐՁԱՆ

36

Գանձարանէն թանկադին քարեր կ'անհետ
նան, այլ եւ սրբադան մատեաններու ոս-
ղէն զարդարանքներն անդամ կողոպտուե-
լուրեր կը հասնին:

Իրաց այս գառնաղէտ վիճակին հանդ
ակներեւ է որ առանց անմիջական ու գո-
նական միջոց ի գործ դնելու՝ ժամաված
ըլլալը կեղք, Վարչութեան համար մեղա-
կից գտնուելու աստիճան պատասխանատ-
ութիւն կը հրաւիրէ, և սակայն եթէ մին-
իսկ կեղք. Կառավարութեան թիւր հայե-
լութիւնը ուղղուի, առանց Երուսաղէ-
Պատրիարքին օժանդակութեանը որ և է ։
Հողութիւն յուսալը անբնական ու անհնար-
իսկ Նորին Սրբազնութիւնը տարիներու-
թացքին մէջ, մանաւանդ վերոյիշեալ վեր-
դէպքերու առթիւ ապացոյցը տուաւ
իրաւասութեան ու պարտականութեանց կ-
տարման անընդունակութեանն ու անկա-
լութեանը, ազդեցութեանց ու սպառնալ-
ինթարկուիլը, առանց որոց վանքը չէր գ-
նար թատր ծանօթ դժբախտութեանց, զե-
մանց, ու աւարին։

Արդ, ինկատի ունենալով այս ամէնք
ինկատի ունենալով որ Նորին Սրբա-
նութեան այս վարժունքը՝ որքան որ ալ ա-
րիքի կամ ծերութեան հետեւանք եղող պ-
կարողութենէ առաջ հկած ըլլայ՝ յամին
դէպս հակառակ է Երուսաղիմայ վանուց ն-
իսկ աղօրինաբար փոփոխուած վերջին կ-
նոնապըին.

Նկատելով որ Կանոնագրութեան հակառակ վարմունքը՝ անկախ որ և է քննութեակներեւ ու բացայաց է.

Նկատելով որ, ըստ Ազգային Սահմանադրութեան 18բդ յօդուածի, թէեւ անկանութեան կառաջ հակած է առաջ բայց հակած է առաջ պատճենի վարմունքը անխուսափելիորէն ամբանանութիւն կը հրաւիրէ իր վրայ.

Նկատելով որ Ազգային Սահմանադրութեան 19րդ յօդուածի երկրորդ հատուածը բարձին արամադրութիւնները երագործ արդիշ ելից հնար չկայ.

Աղքային Վարչութեան Քաղաքական ծ
ովը որոշեց լստ նոյն 19րդ յօդուածի առ
ին հատուածի վերջին տրամագրութեան
մասսանել Նորին Բարձր Սրբազնութեան
արութիւն Վեհապետեան Սրբապիսկապու-
թեան Աղքային Երեսփոխանական Ըն
անուն Ժողովութեան անմեջաւահան Տեղապ

ընտրել և Երուսաղէմայ Պատրիարքական
պաշտօնը յանձնել ընտրելի Տեղապահին։
Առաջին Կեռորդական Վարչութեան

Քաղաքական ժողովն՝ իւր սոյն որոշումը
նախ ներկայեց Կրօնական ժողովոյ հետ
գումարուած վերջին Խառն նիստին և Կրօ-
նական ժողովը՝ ներկաներէն միակ անդամի
մը բացառութեամբ՝ համամիտ գտնուեցաւ
Քաղաքական ժողովոյ եզրակացութեանն ու
առաջարկին :

Ուստի, ի դիմաց կեղքը . Վարչութեան
Խառն Ժողովոյ, կը խնդրենք անմիջապէս
ներկայացնել խնդիրը Ազգ. Ընդհ. Ժողովին
և առաջին նիստին մէջ իսկ որոշել Տեղա-
պահի ընտրութիւնը, վասն զի ամէն մէկ
յապաղում հարիւրաւոր և գուցէ հազարաւոր
ոսկիներ կ'աբժեն և տուժել կուտան Ս. Ե-
րուսաղիմայ վանքին ու Ազգին :

Աղքալին Վարչութեան Քաղաքական
Ժողովը պատրաստ է, ի պահանջել հարկին,
ոչ միայն բերանացի Կերպով բացատրութիւն-
ներ տալ, այլ և իւր զեկուցմանց դրաւոր
փաստերը ներկայացնել:

Կը խնդրենք նաև ընդունիլ մեր յար-
գանազ հաւաստին :

Եղիմաց Աղջ . Կեդր . Վարչութեան
 Ասոն Ժողովոյ
 Դիւան Քաղաքական Ժողովոյ
 Ասենադպիր Ասենապես
 Յ. Եռիսութեան Ս. Գյրսեան

14 May 1909

(Սոյն պաշտօնագրին առաջին բնագիրը,
որ կարգացուեցաւ ժողովին մէջ, ուստահայ
շեղուով խմբագրուած ըլլալով, հետեւեալ
մէնց տեսակ ունեցաւ Դիւտանին

ԴՐԱՄԱՂՈՒԹՅՈՒՆԸ ԱՐԱՐ
ԿՈՂՄԵ :)

ԱՏԵՆԱՊԵՏ էթ. — Եթէ կարդացուած
պաշտօնագիրը Վարչութեան յարգելի Ատե-

նապետին ստորագրութիւնը չը կը բը, պիտի
կարծէինք թէ կովկասէն եկած է այս Կովկասի Հայերէնը որչա՞փ քաղցր և ախորժալուր, զիտել կուտամ սակայն թէ մեր վարչութեան պաշտօնական լեզուն չէ դեռ, ուստի ճարկ է զայն փոխել :

Ս. ԳԱՐԱԾԱՆ էֆ. — Այս խնդրոյն
մէջ, Վարչութեան տեղեկաբերը Շահրիկեան
էֆ. ն ըլլալով, ինք իր սովորական ոճով
խմբագրած է պաշտօնագիրը: Մենք օրէնք

ԱԶԳԱՅԻՆ ԵՐԵՍՓՈԽԱՆՔ

(5 Յունիս 1909)

ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ԵՐԵՍՓՈԽԱՆՔ

ԵԿԵՂԵՑԱԿԱՆՔ

1.	Հմայեակ	Եպիսկ	Դիմումաբան	Բ.
2.	Եղնիկ	"	Ապահովանի	Բ.Պ.
3.	Գնէլ	Ե.Վ.Ռ.Դ.	Գալէմբերեան	
4.	Արսէն	"	Վեհունի	
5.	Դրեգորիս	"	Պալադեան	Բ.Պ.
6.	Արիստակէս	Բաշ.	Ճրզէճեան	
7.	Միքայէլ	"	Աշճեան	
8.	Վահան	"	Խոյեան	
9.	Թուրիկ	"	Պալլդճան	
10.	Սութիսո	"	Պալլդճան	
11.	Հմայեակ	"	Էբսէթճան	
12.	Տրդատ	"	Պայաճեան	
13.	Տաճատ	"	Փաշեան	
14.	Արէլ	"	Երէցեան	Բ.
15.	Դէրդ	"	Պագալեան	
16.	Արիստակէս	"	Հիսարլեան	
17.	Խորէն	"	Ցարութիւնեան	
18.				
19.				
20.				

ԱՇԽԱՐՀԱԿԱՆՔ

Երևա—Գասրմիաւա

21.	Արամ	Էֆ.	Հալաճեան	
22.	Արշակ	"	Գարակէօղեան	Բ.Պ.
23.	Խնդիր	"	Սիմննեան	
24.	Մինաս	"	Չերազ	Բ.Պ.
25.	Ստեփան	"	Գարաեան	
26.	Տօքթ. Վահրամ	"	Թորգոմեան	
27.	Տօքթ. Տիգրան աէջ	Ա.Ճ.Ճ.Ճ.	Աճէմեան	
28.	Տիգրան	Էֆ.	Կիւմիւշէրտան	
29.				

Գատը-զիւլ

30.	Աղասի	Էֆ.	Աղասեան	Բ.
31.	Արմենակ	"	Մանուկեան	Բ.
32.	Լարապէտ	"	Թէրէստէճեան	
33.	Ղաղարոս	"	Չալագեան	
34.	Միհրան	"	Նիրինեան	
35.	Մկրտչէ	"	Մանուկեան	
36.	Սարդիս	"	Լոսէրեան	
37.			Գընալը-Գարքալ	

Գուգիւննու-Խնախիէ

38.	Յակոբ	Էֆ.	Դորեան	
39.	Յովչաննէս	"	Հինդլեան	
40.	Ռուբէն	"	Զարդարեան	
41.	Տօքթ. Միմոն	"	Սեղոսկեան	Բ.
42.	Միսաք	"	Սուրեան	

Բ. Բացակայութիւն առաջին :

Բ. 2 Բացակայութիւն երկրորդ :

Բ. 3 Բացակայութիւն երրորդ :

Բ. Պ. Բացակայութիւն բանառուաւ:

Բ. 2 Բացակայութիւն երկրորդ :

Բ. 3 Բացակայութիւն երրորդ :

Բ. Պ. Բացակայութիւն բանառուաւ:

Գում-զարու, Գում-զարուի դուրս

43.	Դաւիթ	Էֆ.	Տէր-Մովսէսեան	
44.	Տօքթ. Վարապետու	"	Մութափեան	
45.	Համբարձում	"	Պայաճեան	
46.	Սարգիս	"	Սուլին	Բ.Պ.

Գուրուչէմէ-

Եկեղի-զարու

ԱԶԳԱՅԻՆ ԵՐԵՍՓՈԽԱՆՔ

(5 Յունիս 1909)

ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ԵՐԵՍՓՈԽԱՆՔ

	ԵԿԵՂԵՑԱԿԱՆԻ
1.	ՀԱՄԱԿԱԿ
2.	ԵՂԵԿ
3.	ՀԱԿ
4.	ԱԲԱՏԻ
5.	ԴՐԻԳՈՒԹԻ
6.	ԱՐԻՍՏԱԿԵԱ
7.	ՄԻՔԱՅԵԼ
8.	ՎԱՀԱՆ
9.	ՅԱՆԻ
10.	ՍՈՒՐԻԱ
11.	ՀԱՄԱԿԱԿ
12.	ՏՐԴԱՄ
13.	ՏԱՅԱՄ
14.	ԱԲԿ
15.	ԴԿՈՐԴ
16.	ԱՐԻՍՏԱԿԵԱ
17.	ԽՈՐԵՆ
18.	
19.	
20.	

ԱՇԽԱՐՀԱԿԱՆԻ

	ԲԵՐԱ—ԳԱՍՐՄ-ԻՒԱԾ
21.	ԱՐԱՄ
22.	ԱՐՃԱԿ
23.	ԽՆԴԻՐ
24.	ՄԻՆԱՍ
25.	ՄԵՆԻԱՆ
26.	ՏԱՐԺ. ՎԱՀՐՈՒՄ
27.	ՏԱՐԺ. ՏԻՋՐԱՆ պէջ
28.	ՏԻՋՐԱՆ
29.	

	ԳԱՏՐ-ԳԻՒԼ
30.	ԱՂԱՄԻ
31.	ԱՐԱՆԱԿ
32.	ԿԱՐԱՊԵՏ
33.	ՂԱՊԱՐՈՍ
34.	ՄԻՋՐԱՆ
35.	ՄՎՐՄԻՀ
36.	ՄԱՐԴԻ

	ԳՐԱՎԱՐ-ԳԱՐԱԼ
37.	ԳՈՒՂԱԿԱՆԻՆՈՒ—ԽԱՏԻԷ
38.	ՅԱԿՈԲ
39.	ՅՈՎՀԱՆՆԵԱ
40.	ԽՈՎԵՆ
41.	ՏԱՐԺ. ՄԻՄՈՆ
42.	ՄԻՄԱՐ

Բ. Բացակայութիւն առաջին :
 Բ. 2 Բացակայութիւն երկրորդ :
 Բ. 3 Բացակայութիւն երրորդ :
 Բ. Պ. Բացակայութիւն բանառու պահառաւ :

ԳՈՒՄ-ԳԱԲՈՒ, ԳՈՒՄ-ԳԱԲՈՒԻ ԴՐՈՒՅ

43.	ԴԱՏԻԺ	էֆ.	Տէր-Մովսէսեան
44.	Տօքթ. Կարապետ		Մութափեան
45.	Համբարձում	»	Պյածեան
46.	Մարգիս	»	Սուին

47.	Տիրան	էֆ.	Պատական
48.			Եկեղի-գաբու
49.			Ելիս Ս. Եղիա
50.			Թօփ. գախու

51.	Միջրան	էֆ.	Գարագաշեան
52.	Գարբիել	էֆ.	Նէշտէրձեան
53.	Գետրոս	»	Հալտաճեան
54.	Ոռոբէն	»	Փափաղեան
55.	Միւստ	»	Բեաթիսկեան

56.	Համակակ	»	Արամեանց
57.	Յարութիւն	»	Ճանկիւլեան
58.			
59.			
60.			

61.	Երուանդ	էֆ.	Խէրպէկեան
62.	Թագւոր	»	Արեւեան
63.	Խայլիկ	»	Մանեստեան
64.	Միջրան	»	Սէթեան
65.	Յովչաննէս	»	Խստգուլեան

66.	Յովլէփ	»	Քաղաքանց
67.	Արուէն	»	Արսէնեան

68.	Վուամշապուհ	էֆ.	Մանուկեան
69.			
70.	Երուանդ	էֆ.	Գարաեան
71.	Տօքթ. Կարապետ		Ետղուակեան
72.	Հեթում	»	Մեթեան

73.	Մատեփան	»	Թէլլիեան
74.			
75.	Միջրան	էֆ.	Հայկան

76.			
77.			

ՍԱՄԱՐԻԱ Ս. ԱՐԲԱԿՈՒՐ

78.			
79.	Բիւզանդ	էֆ.	Պօղոճեան
80.	Գրիգոր	»	Զօհւազ
81.	Լեւոն	»	Սասթ-Ճեան
82.	Հայկ	»	Խօճասարեան

83.	Միրզա	»	Մակրեան
84.	Պարգև	»	Փափաղեան
85.			

ՍԼԻՒՏԱՐ ԵԿԵՂԻ-ՄԱԽԱԼԻ

86.	Բողդոս	էֆ.	Պայտեան
87.	Վահան	»	Սուրէնեան
88.			

ՍԼԻՒՏԱՐ Ս. ԽԱՅ

89.	Գարբիել	էֆ.	Տէմիրճիպաշեան
90.	Յարութիւն	»	Շահրիկեան
91.	Վարդգէս	»	Սէրէնկիւլեան
92.			

93. ԲՈՒՄԵԼԻ-ԽԻՍԱՐ

94.	Լեւոն	պէջ	Փափաղեան
95.	Խայկ	էֆ.	Սըլվանեան
96.	Յովլէփ	»	Գույումճեան
97.	Եղուարդ	էֆ.	Գարակէօղեան

ՕՐԱԳԻՒԼ

ՅԱԻՆԵԱԼ ՏՐԱՄԱԴՐՈՒԹԻՒՆՎ

ՆԵՐՔԻՆ ԿԱՆՈՆԱԳՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԲՆԴՀԱՆՈՒՐ ՃՈՂՈՎՈՅ

Դ. ՆԻՍ 1879 ԱՄԻ

ՅՈՒ. 6. — Ազգային ժողովն չորս անդամով Ելեւմտից Յանձնախումբ մը կ'ընտրէ իւր մեջէն, որ ազգային պիտնէին մեջ Ազգ. ժողովոյ համար սահմանուած գումարը Վարչութենէն ընդունելով՝ կը հոգայ ժողովին տպագրական, կահ կարահաց եւ ուրիշ ամեն կարգի ծախսերը, եւ տարեգլխին՝ հաշիւր կը ներկայացնէ Ազգային ժողովին :

ԳԻՆ ፤ ՂՐՈՒՇ

Սեփականութիւն Ազգ. սնտուկին, Ազգ. ժողովոյ ծախուց յատկացեալ.

Կը ծախուի յ'Ազգ. Խորհրդարան Պաշարիոյ .

Չ'կնքուած օրինակները կեղծ ու անվաւեր են :